

XIX դարի 80-ական թթ. մինչև երիտթուրքական հեղափոխությունը, կարելի է բնութագրել որպես թուրքական և ընդհանրապես մուսուլմանական բուրժուազիայի տնտեսական վիճակի ամրապնդման շրջան, որն իրագործվեց մասամբ շնորհիվ օսմանյան պետության կիրառած բազաքական միջոցառումների։ Այլազգի բուրժուազիան ստիպված էր այդ տարիներին որոշ բնագավառներում իր գիրքերը գիշել նորեն կերպով։

Վերջին, շորթորդ փուլը համընկնում է երիտթուրքերի տիրապետության տասնամյակին։ Սկզբնական շրջանում այլազգի բուրժուազիան շարունակում է ամրապնդել իր գիրքերը, իսկ թուրք ազգային բուրժուազիան զգալի ազդեցություն է ձեռք բերում բազաքականության բնագավառում, որը որոշ չափով հավասարակշռում է նրա տնտեսական թուլությունը։ Այս վիճակը շարունակվում է մինչև նրա ախույանների սեփականադրվումը և ֆիդիկական ոչնչացումը, որը, ի դեպ, չի սահմանափակվում միայն հայ բուրժուազիայով և միայն առաջին համաշխարհային պատերազմի տարիներով։

Այսպիսով, շորթորդ փուլում բազաքական միջոցներով և ուժի օգտագործմամբ արհեստականորեն վերացվեց այլազգի բուրժուազիայի որոշակի դերը երկրի տնտեսական զարգացման մեջ։ Այս երևույթը շոշափելի բացասական հետևանքներ ունեցավ։ Բազմաթիվ զարգացած ու շեն շրջաններ բայքայվեցին և նա շարունակեցին տասնյակ տարիներով, երկրի կապիտալիստական զարգացումը զգալիորեն կասեցվեց և տնտեսական ընդհանուր մակարդակը մեծ անկում

ապրեց, որ վերահիշյալից բացի պատերազմում թուրքիայի պարտվելու հետևանքն էր։ Թուրքական ազգային բուրժուազիան, լինելով ավելի դեպիցիոն, քան ուրիշ երկրների բուրժուազիան, իր նպատակն իրագործեց երկրի համար չափազանց թանկ գնով։

Հեղինակի կատարած գիտական վերլուծումների շնորհիվ ընթերցողին ներկայացվում է XIX դարի երկրորդ կեսի և XX դարի սկզբի Օսմանյան կայսրության տնտեսական վիճակի պատկերը՝ ըստ տնտեսության առանձին բնագավառների ու երկրի շրջանների, որոնցով պայմանավորված էր նաև բուրժուազիայի այս կամ այն ազգային խմբի զարգացման աստիճանը կապիտալիստական ձեռնարկատիրության ասպարեզներում։

Գրքում, նշված կարևոր խնդիրներին զուգահեռ, արծարծվում են նաև հետաքրքրական այլ պրոբլեմներ։ Սակայն զրանցից մի քանիսը, ինչպես, օրինակ, թուրք ազգային բուրժուազիայից առանձնացվող կոմպրադորների հարցը, պահանջում է հավելյալ հետազոտական աշխատանք և հիմնավորում։ Աշխատության մեջ, առանձին ասպեկտները ներկայացնելիս, այնուամենայնիվ զգացվում է փաստական տվյալների պակաս, որը, ինչպես իրավացիորեն նշում է հեղինակը, կարող է լրացվել Օսմանյան կայսրության երթմնի հպատակ ժողովուրդների լեզոներով եղած աղբյուրներն ու զրահանությունն ընդգրկելով։

Լ. Ս. ԿՈՐՆԵՄԱՋՅԱՆ

ԱՆՏՈՒԱՆ ՄԵՅՆ, Հայագիտական ուսումնասիրություններ. Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, Երևան, 1978, 822 էջ, գինը 4 ռ. 83 կ.:

Հայագիտությունը եղել է ֆրանսիացի մեծ գիտնական, լեզվաբան, մշակութային ու հասարակական գործիչ Անտուան Մեյեի (1866--1936) շուրջ կեսդարյա բեղմնավոր գիտական գործունեության հիմնական բնագավառներից մեկը։ Նրա գրչին են պատկանում հայոց լեզվին, հայ բանասիրությանը և մշակույթի բազմապիսի շարքերին նվիրված արժեքավոր գիտական մենագրություններ, բազմաթիվ հոդվածներ, գրախոսություններ ու ճառեր, որոնք ցարդ մատչելի են եղել գլխավորապես մեր գիտական մտավորականության մի նեղ շրջանին։ Վաղուց էր զգացվում մեծ հայագետի աշխատությունների, հատկապես հայագիտական հե-

տազոտությունների և այլ նյութերի կենտրոնացման և հայերեն թարգմանության կարիքը։

Գրախոսվող գիրքը Մեյեի աշխատությունների սովորածավալ (822 էջ), բայց դեռևս ոչ լիակատար ժողովածուն է, որը նրա հայագիտական ժառանգությունը հայ ընթերցողին ներկայացնելու, նրա «լեզվաբանական և հայասիրական մտքերին ծանոթանալու պահանջի մասնակի իրականացումն է միայն» (էջ 7)։ «Հայագիտական հետազոտությունների մատենաշարի» այս գիրքը (խմբագիր՝ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Դ. Բ. Ջահուկյան) հրատարակության է պատրաստել Երևանի պետական համալսարանի հայագիտական հետազոտությունների կենտրոնը։

Ժողովածուն, որ օժտված է խմբագրի և կազմողի սեղմ առաջարկներով, ծանոթագրություններով, ցանկերով ու հեղինակի կենսագրությամբ նվիրված ակնարկով, իր ինքն հիմնական բաժիններում ամփոփում է ընդհանրապես հայերենին ու հայագիտությանը, հայոց լեզվի համեմատական հնչյունաբանությանը, բառագիտությանը, բերականությանը, հայ բանասիրությանը և հայագիտական այլ բնագավառներին վերաբերող նյութեր, բացառությամբ Մեյեի՝ հայերենին նվիրված մենագրական բնույթի գործերի:

Ամբողջ նյութը լամակարգված և մշակված է գիտական պահանջների, ինչպես նաև ընթերցողներին դյուրությամբ ներկայացնելու նկատառումներով: Ժողովածուի բաժիններում ու ենթաբաժիններում, համապատասխան վերնագրերի տակ, ամբողջական հոդվածներն ու հատվածաբար բերվող նյութերը համարակալված են և դասավորված ժամանակագրական կարգով: Բաժինների բնույթն ու ամբողջությունը նշելու, հատվածների բնագրային պատկանելությունն ու տեղը ցույց տալու նպատակով քառակուսի փակագծերի մեջ տրված են համապատասխան վերնագրեր: Հայագիր են դարձված բնագրերում լատինական տառադարձությամբ բերվող հայերեն բառերն ու նախադասությունները, էջատակում տրվում են նյութերի բնագրային (լատինատառ) վերնագրերն ու հեղինակային ծանոթագրությունները, ուղղված են բնօրինակներում սպրդած տպագրական վրիպակները և այլն (տե՛ս էջ 8—9):

Ժողովածուի առաջին մասում ընդգրկված են լեզվաբանական, բանասիրական ու պատմական բնույթի նյութերը, երկրորդում՝ հարյուրից ավելի հայագիտական աշխատությունների գրախոսությունները: Պատմահամեմատական լեզվաբանության խոշոր ներկայացուցիչ Մեյեն հայերենի հնչյունաբանական, բառագիտական ու քերականական հարցերը քննում է ցեղակից լեզուների համապատասխան երևույթների համեմատությամբ, հիմնվելով հայ մատենագրությամբ պատմականորեն երաշխավորված հարուստ փաստերի վրա:

Ժողովածուի «Հայերեն և հայագիտություն» բաժնում զետեղված են հայերենի բարբառային դիրքին, նրա ընդհանուր բնութագրին, քրանսիայում կատարված հայագիտական աշխատանքին և այլ հարցերի վերաբերող նյութեր: Մեյեի նախորդ, նույնպես մեծ հայադեմո շ. Հյուբշմանը գիտականորեն ծխտելով իրանական բարբառին հայերենի պատկանելու կարծիքները (Պետերմանի, Բուպի, Վինդիշմանի, Դոշեի, Լադարդի և այլոց), արդեն ապացուցել և հաստատել էր, որ հայերենը ինքնուրույն ճյուղ է հնդեվրոպական լեզվաընտանիքում: Մեյեն հե-

տեում է Հյուբշմանին: Դեռեա 1896 թ. նա, անվերապահորեն ընդունելով հայերենի անկախության փաստը, նրա դիրքը հնդեվրոպական բարբառների շարքում համարում է միջակա հնդիրանականի, լետասլավոնականի և հունարենի միջև (էջ 11), գտնելով, որ «հայերենը շարունակությունն է հնդեվրոպական լեզվախմբի և միջին տեղ է գրավում հնդիրանականի (արիական) և հունարենի միջև, բայց այդ երկուսից էլ տարրեր է» (էջ 23): Հետագայում, ամրապնդելով և զարգացնելով Հյուբշմանի հայտնի դրույթը, նա հաստատում է, որ հայերենը «կազմում է մի առանձին ճյուղ» (էջ 17), «հայերենը իրանական լեզու չէ» (էջ 18), «հայերեն լեզուն հնդեվրոպական լեզվաընտանիքի անկախ մի անդամն է...» (էջ 22) և այլն:

«Հայերենի հնչյունաբանություն» վերնագրի տակ ներկայացվում են Մեյեի կարծիքներն ու դիտողությունները հայկական գրի, այբուբենի, ուղղագրության բարեփոխման, տառադարձության, շեշտի ու ձայնավորների հնչյունափոխության, հնչյունական համապատասխանությունների, ձայնավորային նախահավելվածի, բաղաձայնական տեղաշարժերի և այլ հարցերի մասին: Նա իրեն հատուկ նրբանկատությամբ և զգուշավորությամբ, լեզվական կոնկրետ փաստերի քննությամբ բացահայտում է հայերենի հնչյունական համակարգի պատմական դարգացման առանձնահատկությունները, նշում է մասնավորապես, որ «հնդեվրոպական բառավերջային վանկերի լրիվ անկումը հայերենում բացատրվում է նախավերջին վանկի շեշտվածությամբ» (էջ 38), որ հայերենի և հունարենի ձայնավորային նախահավելվածը «առաջանում է մինչև իսկ հնդեվրոպականից ծագող բարբառային միտումից» (էջ 45), որ հայերենի և գերմանական լեզուների բաղաձայնական տեղաշարժերը հնդեվրոպական բարբառային մի փաստի վերագրելու վճռական պատճառ չկա (էջ 51) և թուրեմն միանգամայն հնարավոր է, թե տեղաշարժն անկախ կերպով տեղի ունեցած լինի հայերենում և գերմանական լեզուներում» (էջ 52), որ «հնդեվրոպական ձայնեղ պայթականների, լինեն դրանք շնչեղ կամ ոչ շնչեղ, հայկական հնչյունական դարգացումը հստակ է» (էջ 55), հայերենում «հնդեվրոպական պայթական շնչեղ խուլերի հետքը ամենահստակն է» (էջ 61) և այլն:

«Բառագիտություն» բաժինն են կազմում հայերենի բառաբարդման, բարդ բառերի տիպերի, իրանական, պարթևական, հունական, լատինական փոխառությունների հարցերին նվիրված նյութերը և ստուգաբանությունները, Հնդեվրոպական բաղմամբիվ լեզուների փաստերի համեմատությամբ Մեյեն տալիս է տասնյակ

հայերեն լեզուների ընդարձակ, խոր ու բազմակողմանի գիտական ստուգաբանությունը, միաժամանակ անդրադառնալով Հյուրըմանի, Բրուգմանի, Բուգգեի, Պետերսենի, Անատյանի և այլ լեզվաբանների ստուգաբանական աշխատանքին: Իր ուշագրավ դիտողություններն ու մտքերը նա հետևողականորեն, սակայն ոչ խստությամբ ու ծայրահեղությամբ, հիմնավորում է հնչյունական օրենքների, բացառությունների հաշվառումով և համաբանությամբ:

Ապա գալիս են հայերենի համեմատական ձևաբանությանը նվիրված քննություններն ու դիտողությունները: Մեյեն յուսարանում է հայերենի հոլովման, հոլովների, զանազան հոլովածների, խոնարհման, բայածների ծագման, զարգացման ու յուրահատկությունների բազմաթիվ հարցեր: Հայերենի համեմատական շարահյուսության հարցերը քննվում են Մեյեի հինգ ընդարձակ հոդվածներում: Հետադոտելով հայերենի բերականական ձևերի ծագման, նշանակության ու կիրառության հարցերը, նա հայերենը բնորոշում է որպես բերականական ձևերի ամենակատարյալ զուգահեռություն ներկայացնող (էջ 291), բայերը որոշելու միջոցներով հարուստ, կուռ ու համաշափ համակարգ (էջ 319): Մասնավորապես ձևերի կիրառության առթիվ Մեյեն գրում է. «Ինչպես բայական, այնպես էլ անվանական ձևերի կիրառության մեջ դասական հայերենը, պահպանելով հանդերձ հնդեվրոպական շատ գծեր և ներմուծելով հանդերձ հին բերականական կարգեր արտահայտելու յուրահատուկ միջոցներ, արդեն ներկայացնում է, ուրեմն, մի շատ նոր տիպ, և նրանում գտնում ենք սկզբնավորումն այն ամենի, ինչ պետք է իրականանար ժամանակակից հայերենում» (էջ 393): «Բարբառագիտական» բաժնի երկու հիմնական հոդվածներում Մեյեն դիտողություններ է անում Հ. Աճառյանի բարբառագիտական ուսումնասիրությունների և Յ. Կարստի «Վիլիկյան հայերենի պատմական բերականության» վերաբերյալ: Նա բարձր է գնահատում Հ. Աճառյանի ուսումնասիրությունները. «Նրա աշխատությունը պատիվ է բերում նրան և մեծապես աջակցում է ուղադրության» (էջ 440):

Հայ բանասիրության համար, հատկապես լեզվաբանական առումով, մեծ արժեք ունեն Նիլսենի, Նիլսիկի, Ագաթանգեղոսի բնագրերին Ավետարանի հայերեն թարգմանությանն ու ձևագրերին նվիրված հոդվածները, որոնք կազմում են ժողովածուի «Բանասիրական» բաժնի: Մեյեն մասնագետ բնագրագետի, բանասերի ու հայագետի համաթյամբ է քննում ու գնահատում հայերենի զբաղմունքները, Մատնանշելով հայերեն ձևագրերի կրած փոփոխությունները, նա առաջ է քաշում դասական հու-

յերենի ձևերը հարադատությամբ ներկայացնող սղորյուրների վրա հիմնվելու, որանց գրությունը իրեն սկզբնական գրություն գիտելու, համեմատությունների միջոցով փոփոխությունները բացահայտելու և հայերենի հին ձևերը վերականգնելու հարցերը: Ուստի, նա հայ բանասիրության կենտրոնական հարց է համարում բնական բնագրերի ստեղծման հարցը՝ «Հայ բանասիրության առաջնթացը նախ և առաջ պահանջում է հենց այս կարգի (Նիլսիկի բնագրի նման—Հ. Ա.) աշխատանքներ» (էջ 489):

Մեյեն հայ ժողովրդի մեծ բարեկամն էր, լավ գիտեր ոչ միայն հայոց լեզուն, այլև պատմությունը, մշակույթը, առասպալակ՝ հայ կյանքը: «Հայոց պատմություն» վերնագրի տակ զետեղված են նրա 1916—1920 թթ. գրված հոդվածներն ու ճառերը, որոնց բովանդակությունը իր գոյության համար մարտնչող ժողովրդի օրինական շահերի պաշտպանությունն է: Մեր պատմության վատթար ժամանակներում նա ձայն է բարձրացնում հօգուտ հայ ժողովրդի, ասելով իսկական գիտնականի, քաղաքացու և մարդասերի իր արդարացի խոսքը. «Հայերը շատ մեծ ազդ չեն, բայց շատ հին ազգ են, մենք դա գիտենք պատմությունից. հայերի իրավունքներն ունեցողը համարտությունից բացի այլ բանի կարիք չունի» (էջ 518):

Ժողովածուի երկրորդ մասում ընդգրկված են Մեյեի գրախոսությունները Ս. Բուգգեի, Ա. Թոմսոնի, Հ. Հյուրըմանի, Ֆ. Կոնիքի, Հ. Կարիերի, Գ. Խալաթյանի, Յ. Կարստի, Ֆ. Ֆինկի, է. Լիդենի, Ֆ. Մակկերի, Հ. Պետերսենի, Կ. Կոստանյանի, Կ. Բասմաջյանի, Հ. Տաշյանի, Յ. Մարկվարտի, Ն. Ադոնցի, Ն. Մառի, Հ. Օրբելու, Մ. Աբեղյանի, Ս. Ամատունու, Հ. Աճառյանի և այլ հայագետների աշխատությունների, զանազան գիտական հանդեսների ու հրատարակությունների մասին: Երկու տասնյակ գրախոսություններ վերաբերում են Հ. Աճառյանի աշխատություններին, որոնք արժանացել են Մեյեի հավանությանն ու բարձր գնահատականին:

Վերջապես, բուն նյութերից հետո, համապատասխան վերնագրերի տակ ամփոփված են ինամքով կազմված ծանոթագրությունները, որոնք մատենագիտական, բնագրագիտական, պատմական և այլ բնույթի անհրաժեշտ տեղեկություններ են տալիս Մեյեի աշխատությունների մասին:

Ժողովածուն ունի Մեյեի կյանքի ու գիտական գործունեության համառոտ ժամանակագրություն, համառոտագրությունների, հայագիտական աշխատությունների, նրա մասին գոյություն ունեցող գրականության և տպագիր ու անտիպ նամակների ցանկեր:

Ուշադրություն է դրավում համառոտ կենսագրական ակնարկը, որտեղ վեր են հանված Մեյեի մանկության, պատանեկության, ուսումնականության ու որպես գիտնական ձևավորվելու, դասախոսական աշխատանքի, հայերենին ու հայ մշակույթին հաղորդակից դառնալու, Հայաստան կատարած այցելությունների, հայ մտավորականների հետ ունեցած կապերի, հայ մշակույթի դարպասմանը նպաստելու նրա մտադրությունների ու ձեռնարկումների և նրա արդյունաշատ հայագիտական գործունեության այլ գրվածքները:

«Հայագիտական ուսումնասիրությունները» թարգմանելիս ուշադիր պրպտումներ են կատարվել Մոսկվայի, Լենինգրադի, Երևանի գրադարաններում ու արխիվներում, հավաքված նյութը լրացվել է Փարիզից ստացված նյութերով ու տեղեկություններով: Այդուհանդերձ Մեյեի հայագիտական վաստակի կենտրոնացումն ու թարգմանությունը տակավին ավարտված չէ. մնում են հայերենին նվիրված նրա գրքերը և նրա վիթխարի գիտական ժառանգության մեջ սփռված բազմաթիվ այլ հայագիտական նյութեր: Սակայն ուրախալի է, որ արդեն կատարված է առաջին լուրջ, կարևոր ու միևնույն ժամանակ դժվարին քայլը. թարգմանված, համակարգված ու ծանոթագրված հարուստ նյութը ընթերցողին է ներկայանում որպես ամբողջական և հաջողված գիտական ժողովածու: Հուսանք, որ համալսարանի հայագիտական կենտրոնը ապագայում հայ ընթերցողի գրադարանը կհարստացնի նաև Հ. Հյուբշմանի, Յ. Կարստի, Յ. Մարկվարտի և այլ հեղինակների՝ ժամանակակից հայագիտության համար գիտական ու գործնական կարևորություն ունեցող աշխատությունների հրապարակումներով:

Կարծում ենք, վերևում ասածից հետո, հարկ չկա ծավալվելու ժողովածուի նշանակության շուրջը. այն կարևոր մշակութային երևույթ է, շատ անհրաժեշտ՝ հայագետի, ուսանողի, մտավորականի համար:

Ընդունելով ժողովածուի անուրանալի արժանիքները, այնուամենայնիվ, անհրաժեշտ ենք համարում անել նաև մի քանի դիտողություններ. որոնք, սակայն, էական նշանակություն չունեն:

Հայտնի է, որ Մեյեի, մասնավորապես հայերենի համեմատական հնչյունաբանությանն ու քերականությանը վերաբերող որոշ դրույթներ դարգացվել, լրացվել և, բնականաբար, մասամբ խմբագրվել ու վերանայվել են պատմահամեմատական լեզվաբանության վերջին տասնամյակների նվաճումներին համապատասխան: Այդ նկատառումով լավ կլիներ, եթե ժողովածուն ունենար ընդարձակ ներածություն՝ Մեյեի հայագիտական ժառանգության ընդհանուր վերլուծությամբ, նրա լեզվաբանական դրույթների ու ըմբռնումների ժամանակակից գիտական մեկնաբանությամբ ու ամփոփումով:

Ժողովածուն ավարտուն տեսք կունենար, եթե ընդգրկեր նաև Մեյեի մյուս հոդվածներում առկա հայագիտական մտքերը:

Գիրքը կշահեր, եթե ի թիվս այլ ցանկերի լիներ նաև անձնանունների ցանկ, որը մեծապես կօգներ հետազոտողին:

«Հայագիտական ուսումնասիրություններ» գիտական ժողովածուն, հիրավի, ծանրակշիռ նույստ է բերում հայագիտության զարգացմանը:

Բանասիր. գիտ. դոկտոր Հ. Մ. ԱՄԱԼՅԱՆ

ՊԱՐՈՒՅՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ, Հայաստանի վրացերեն արձանագրություններ, Երևան, 1977, 363 էջ, գինը 3 ռ. 65 կ.:

Հայաստանում վրացերեն արձանագրությունների գոյությունը պայմանավորված է հայ և վրաց ժողովուրդների դարավոր հարևանությամբ, սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային առնչություններով և այլևայլ գործոններով: Բազմաբնույթ այդ արձանագրությունները (շինարարական, նվիրատվական, արտոնագրային, հիշատակարանային և այլն) հարուստ ու հավաստի փաստական նյութ են պարունակում երկու ժողովուրդների պատմության ամենատարբեր կողմերի մասին: Անհնարին է պատկերացնել կովկասագիտությանը հետաքրքրող բազմաթիվ հարցերի սպառիչ կամ նորոգիչ քննությունն առանց այդ արձանագրու-

թյունների վերծանության ու համապատասխան ուսումնասիրության: Գրանով պետք է բացատրել այն հետաքրքրությունը, որ այդ վիճադիր վավերագրերի նկատմամբ ցուցաբերվում է տակավին անցյալ դարի կեսերից:

Հետազոտողներից առաջինը հայագետ Ներսես Սարգիսյանն էր, որը, շրջելով Արևմտյան Հայաստանում, պատմեց և ակագ. Մ. Թրոսի վերծանությամբ ու թարգմանությամբ 1864 թ. հրապարակեց շուրջ 25 վրացերեն արձանագրություն: Ն. Սարգիսյանի շնորհակալ ձեռնարկումը հետագայում շարունակեցին ակագ. Ն. Մառը, պրոֆ. Լ. Մելիքսեթ-Քեկը, ակագ. Ա. Շանիձեն՝ գիտական շրջանառության մեջ դնելով Հայաս-